

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ - 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Քաղաքացիական հասարակության
ինստիտուտ» հասարակական
կազմակերպության Ընդհանուր Ժողովի
2018 թվականի հունվարի «10»-ի որոշմամբ

Կազմակերպության Տնօրեն՝

Ա. Կիրակոսյան

ստորագրություն



ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարի 03.08.1998թ.

թիվ 541 հրամանով

Նոր խմբագրությամբ կանոնադրությունը

Գրանցված է

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից 08.04.2003թ.

Գրանցման համար 211.171.01702

Հարկ վճարողի հաշվառման համար՝ 02222995
08.04.2003 թ. գրանցված կանոնադրության թիվ 001-2
փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի գործակալության
կողմից 08.05.2015թ.

08.05.2015 թ. գրանցված կանոնադրության
թիվ 001-2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի գործակալության
կողմից՝ «13» փետրվար 2018թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՐԱՆՑՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է
ստորագրություն *Գրանցված է*
անուն, ազգանուն



«ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակով, ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:
- 1.2. Կազմակերպությունը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին օրենքի և սույն կանոնադրության համապատասխան:
- 1.3. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է օրինականության, հրապարակայնության, խտրականության բացառման, անդամության կամավորության, անդամների շահերի ընդհանրության, բարեխղճության, հաշվետվողականության, իրավահավասարության և ինքնակառավարման սկզբունքների հիման վրա:
- 1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Կազմակերպությունը կարող է գործել արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան՝ ստեղծելով առանձնացված ստորաբաժանումներ:
- 1.5. Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում, հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:
- 1.6. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է՝ համագործակցելով պետական, հասարակական, կրոնական, այլ կազմակերպությունների, ինչպես նաև կազմակերպության խնդիրների և նպատակների իրագործմանը նպաստող քաղաքացիների հետ: Կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին, ունենալ միջազգային կապեր, կնքել համաձայնագրեր միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների հետ:
- 1.7. Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի իր անվամբ հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, անկյունադրոշմ, պաշտոնաթղթեր, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում ինչպես՝ դրամով, այնպես էլ տարադրամով:
- 1.8. Կազմակերպությունն իր աշխատանքների կազմակերպման, կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար կարող է հիմնել կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, տնտեսական ընկերություններ, ձեռք բերել և տնօրինել նյութական միջոցներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.9. Կազմակերպությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է հիմնել լրատվական միջոցներ, ինչպես նաև տեղեկատվություն տարածել կազմակերպության կատարած գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:

10. Կազմակերպությունն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:
- 1.11. Կազմակերպության անվանումն է՝
- հայերեն՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն, կրճատ անվանումը հայերեն՝ ՔՀԻ ՀԿ
 - անգլերեն՝ “Civil Society Institute” Non-governmental Organization, կրճատ անվանումն անգլերեն՝ CSI NGO:
- 1.12. Կազմակերպությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:
- 1.13. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Քանաքեռ-Զեյթուն Քանաքեռցու փողոց 117/2 շենք, 39 բնակարան, հեռախոս՝ +374 10 574317, էլ. հասցե՝ csi@csi.am:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1. Կազմակերպության առաքելությունն ու նպատակն է՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նպաստել ժողովրդավարական պետության կայացմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը ՀՀ-ում:
- 2.2. Կազմակերպության գործունեության առարկան է՝
- ա) նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարության կայացմանը,
 - բ) նպաստել ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին գիտելիքների տարածմանը,
 - գ) նպաստել ազատ և արդար ընտրությունների իրականացմանը,
 - դ) նպաստել կոնֆլիկտների կանխարգելմանը և լուծմանը:
- 2.3. Կազմակերպության խնդիրներն են՝
- ա) մշակել և իրականացնել միջոցառումներ ընտրությունների մասին գիտելիքների տարածման նպատակով: ՀՀ-ում անցկացվող հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների ընթացքում հանդես գալ որպես դիտորդ և հրատարակել դիտարկման արդյունքները,
 - բ) իրականացնել մշտադիտարկում, այդ թվում՝ ազատագրկման վայրերում, հոգեբուժարաններում և դատարաններում,
 - գ) մշակել և իրականացնել ժողովրդավարության, մարդու իրավունքների և կոնֆլիկտների լուծմանն ուղղված կրթական ծրագրեր,
 - դ) իրականացնել ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության և կոնֆլիկտների լուծման մասին լուսաբանում և իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործունեություն, այդ թվում՝ իր կողմից հիմնադրած ԶԼՄ-ների միջոցով,
 - ե) իրականացնել անհատների և խմբերի իրավունքների և շահերի պաշտպանություն, այդ թվում՝ իրավախորհրդատվության միջոցով,
 - զ) իրականացնել ջատագովության և շահերի պաշտպանության քարոզարշավներ,
 - է) հրապարակել և հրատարակել պարբերականներ, զեկույցներ և այլ ձեռնարկներ,
 - ը) կազմակերպել կոնֆերանսներ, դասընթացներ, բաց բանավեճեր, սեմինարներ և այլ

հանրային միջոցառումներ,

թ) իրականացնել սոցիոլոգիական հետազոտություններ,

ժ) ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով օգնություն ցուցաբերել,

ի) իրականացնել ՀՀ օրենսդրությանը չհակասող, կազմակերպության նպատակների իրականացմանը նպաստող այլ գործունեություն:

2.4. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական և միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային համանման կազմակերպությունների հետ:

2.5. Կազմակերպության շահառուներն են ՀՀ քաղաքացիները, արդարադատության ոլորտի ներկայացուցիչները, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, տեղական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները, հիմնադրամները և օրենքով սահմանված կարգով գրանցված այլ կազմակերպությունները, ուսանողները, անչափահասները, կազմակերպության խնդիրների և նպատակների իրագործման շրջանակներում կազմակերպության հետ համագործակցող տեղացի և օտարերկրյա գործընկերները, ուսումնական հաստատությունները և կրթության ոլորտի ներկայացուցիչները, ինչպես նաև կազմակերպության խնդիրների և նպատակների իրագործմանը նպաստող կամ մասնակցող ֆիզիկական անձինք:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է լինել 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, հասարակական կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է սույն կանոնադրությունը և իր գործունեությամբ նպաստում է կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրագործմանը:

3.2. Կազմակերպության նոր անդամի ընդունելությունը կատարվում է կազմակերպության խորհրդի որոշմամբ՝ անդամագրվողի դիմումի համաձայն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշման համաձայն:

3.3. Կազմակերպության անդամը մուծում է մուտքավճար և անդամավճար, որոնց չափերը սահմանվում և գանձվում են կազմակերպության խորհրդի կողմից, ձեռք է բերում անդամատոմս և հաշվառման թերթիկ:

3.4. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալ Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է սվյալ անդամի գրավոր դիմումի հիման վրա, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա:

3.5. Կազմակերպության անդամությունից հեռացումը տեղի է ունենում խորհրդի որոշմամբ:

3.6. Կազմակերպության այն անդամը, ով պարբերաբար խախտում է սույն կանոնադրությամբ

անդամությունից: Վերստին անդամագրվելը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

4.1.1 Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում,

4.1.2 ներկա լինելու Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,

4.1.3 Կազմակերպության տնօրենի որոշմամբ՝ անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,

4.1.4 Վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները,

4.1.5 ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,

4.1.6 Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները,

4.1.7 Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

4.1.8 իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4.1.1 կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

4.1.2 բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

4.1.3 վճարել անդամավճար:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության Ժողովի կամ խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից հեռացում:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ,
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1 Կազմակերպության կառավարման կառուցվածքն է՝ Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը՝ Ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ժողով), Կազմակերպության ղեկավար մարմինները՝ Խորհուրդը, նախագահը, Կազմակերպության գործադիր մարմինը՝ Տնօրենը: Կազմակերպությունն ունի վերստուգող հանձնաժողով:
- 5.2 Կազմակերպության ղեկավար մարմինները և վերստուգող հանձնաժողովն ընտրովի են:
- 5.3 Կազմակերպության ղեկավար մարմինների անդամներ կարող են դառնալ 18 տարին լրացած անձինք:
- 5.4 Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինն անդամների Ընդհանուր ժողովն է, որին պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը: Կազմակերպության Ընդհանուր ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ՝ կազմակերպության նախագահի կողմից: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները հետևյալ համամասնությամբ՝ մինչև 200 անդամի դեպքում՝ յուրաքանչյուր 10 անդամից մեկ պատվիրակ, մինչև 400 անդամի դեպքում՝ յուրաքանչյուր 20 անդամից մեկ պատվիրակ, 400 և ավելի անդամի դեպքում՝ յուրաքանչյուր 30 անդամից մեկ պատվիրակ:
- 5.5 Կազմակերպության արտահերթ ժողով գումարվում է Կազմակերպության նախագահի, խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնության, անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի կամ վերստուգող հանձնաժողովի նախաձեռնությամբ, նշված նախաձեռնությունից ոչ ուշ քան 5 օրվա ընթացքում՝ Կազմակերպության նախագահի կողմից: Արտահերթ ժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով: Եթե նախագահը հրաժարվում է արտահերթ ժողով հրավիրել, ապա արտահերթ ժողով հրավիրում է պահանջող կողմը՝ Կազմակերպության մարմինների հրաժարականի և նոր կառավարման մարմիններ ընտրելու օրակարգով: Եթե ժողովը պետք է անցկացվի պատվիրակներով և հնարավոր չի լինում սահմանված ժամկետում պատվիրակներ ընտրել, ապա ժողովին հրավիրում են նախորդ ժողովի պատվիրակներին: Խորհուրդը որոշում է արտահերթ ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 5 օրվանից առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:
- 5.6 Կազմակերպության Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե Ընդհանուր ժողովին մասնակցում են կազմակերպության անդամների կամ ընտրված պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:
- 5.7 Կազմակերպության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ է քվեարկել կազմակերպության բոլոր

8 Կազմակերպության Ընդհանուր Ժողովը.

- ա) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը, կատարում է փոփոխություններ կամ լրացումներ դրանում և/կամ հաստատում է նոր խմբագրությամբ կանոնադրությունը,
- բ) հաստատում է կազմակերպության կառուցվածքը, որոշում է Կազմակերպության խորհրդի թվաքանակը, ընդունում է որոշումներ կազմակերպության գործունեության կարևորագույն խնդիրների վերաբերյալ,
- գ) երկու տարի ժամկետով ընտրում է կազմակերպության խորհուրդ և նախագահ, վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները,
- դ) երկու տարի ժամկետով ընտրում է կազմակերպության տնօրեն, վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները,
- ե) երկու տարի ժամկետով ընտրում է վերստուգող հանձնաժողով, վաղաժամկետ դադարեցնում է վերստուգող հանձնաժողովի լիազորությունները,
- զ) երկու տարին մեկ անգամ հաստատում է Տնօրենի կողմից հաստատված ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
- է) քննարկում և հաստատում է կազմակերպության անցած երկու տարիների գործունեության վերաբերյալ խորհրդի, նախագահի և տնօրենի հաշվետվությունները,
- ը) ընդունում է որոշում Կազմակերպության վերակազմակերպման և լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,
- թ) ընտրում է Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե օրենքի համաձայն Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի.
- ժ) դադարեցնում է Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.
- ժա) իրականացնում է օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Կազմակերպության խորհուրդը.

- ա) հանդիսանում է կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինն Ընդհանուր Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում,
- բ) որոշումներ է կայացնում կազմակերպության կազմում անդամագրության և ազատման վերաբերյալ, որոշում է անդամավճարների և մուտքավճարների չափերը և դրանց գանձման կարգը,
- գ) հաստատում է կազմակերպության հիմնական միջոցառումների տարեկան պլանները, ծրագրերը և հսկում դրանց կատարման ընթացքը,
- դ) որոշումներ է ընդունում կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ, մասնաճյուղեր, ինչպես նաև՝ հիմնարկներ, տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանք լուծարելու մասին,
- ե) որոշում է ընդունում Ընդհանուր Ժողովի արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ հանդես գալու մասին:

5.9 Կազմակերպության խորհուրդի կազմը որոշում է Ընդհանուր Ժողովը: Խորհուրդի նիստն իրավասու է, եթե նիստին մասնակցում են կազմակերպության Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ձայների

պարզ մեծամասնությամբ:

5.10 Կազմակերպության Խորհուրդն իր հերթական նիստերը գումարում է առնվազն չորս ամիսը մեկ անգամ: Կազմակերպության Խորհուրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Խորհուրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի գրավոր պահանջով կամ կազմակերպության նախագահի որոշմամբ:

5.11 Կազմակերպության նախագահը.

ա) ղեկավարում է կազմակերպության Ընդհանուր Ժողովի և կազմակերպության Խորհրդի աշխատանքները և վարում է նիստերը,

բ) սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով հրավիրում է

կազմակերպության Ընդհանուր Ժողովի և Խորհրդի հերթական և արտահերթ նիստեր,

գ) կազմակերպության Ընդհանուր Ժողովին հաշվետվություն է ներկայացնում

կազմակերպության Խորհրդի և իր կատարած աշխատանքների մասին,

5.12 Կազմակերպության տնօրենը.

ա) ապահովում է Ժողովի կամ Խորհրդի որոշումների կատարումը.

բ) կազմակերպում և ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և հաշվետու է Կազմակերպության Ընդհանուր Ժողովին,

գ) արձակում է հրամաններ՝ կազմակերպության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ, ստորագրում է հրամաններ, կարգադրություններ, կազմակերպության անունից հանդես գալու մասին լիազորագրեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր,

դ) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

ե) հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք երկու տարին մեկ անգամ, վերստուգող հանձնաժողովի եզրակացության հետ միասին, ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

զ) առանց լիազորագրի ներկայացնում է կազմակերպությունը Հայաստանի հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, ՀՀ պետական մարմիններում, տեղական և միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններում, դատարանում,

է) կազմակերպության անունից վարում է բանակցություններ, կնքում պայմանագրեր և համաձայնագրեր, տալիս է լիազորագրեր,

ը) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

թ) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

ժ) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները:

5.13 Կազմակերպության վերստուգող հանձնաժողովն իրավասու է.

1) տարին մեկ անցկացնելու Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

2) ծանոթանալու Կազմակերպության գործունեությանն արևելող բոլոր փաստաթղթերին և

գրավոր կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու նրա մարմիններին, որոնք պարտավոր են տասնաշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր պատասխաններ,

3) պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

4) իրականացնելու Կազմակերպության կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

5.14 Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության Ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից:

5.15 Վերստուգող հանձնաժողովն իրավասու է որոշումներ կայացնել իր անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.16 Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումների բողոքարկման կարգը.

ա) Կազմակերպության անդամը կարող է գրավոր բողոքարկել Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները: Կազմակերպության նախագահը պարտավոր է 7-օրյա ժամկետում բողոքողին տալ սպառիչ պատասխան՝ ըստ բողոքի էության:

բ) Նախագահի պատասխանի անբավարար լինելու դեպքում, Կազմակերպության անդամը կարող է պահանջել, որպեսզի բողոքը քննարկվի և որոշում կայացվի

Կազմակերպության Խորհրդի առաջիկա նիստում, եթե բողոքարկվում են Կազմակերպության նախագահի որոշումները, Կազմակերպության Ընդհանուր Ժողովի առաջիկա նիստում, եթե բողոքարկվում են Կազմակերպության Խորհրդի կամ Տնօրենի որոշումները:

գ) Կազմակերպության անդամը կարող է նաև դատական կարգով բողոքարկել Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

6.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

6.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

6.3.1 Կազմակերպության անդամների դրամական և նյութական ներդրումները,

6.3.2 մուտքավճարները և անդամավճարները,

- 6.3.3 բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը, ներդրված ավանդներից ստացված եկամուտները,
 - 6.3.4 դրամաշնորհները,
 - 6.3.5 բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
 - 6.3.6 Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,
 - 6.3.7 Կազմակերպության կողմից հիմնադրված սնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
 - 6.3.8 հանգանակությունները,
 - 6.3.9 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:
- 6.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար և չեն կարող բաշխվել անդամների միջև:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- 7.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:
- 7.2. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:
- 7.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 10.01.2018 թվականին և բաղկացած է 10 թերթից: